*տամնաձեւերի միջից նայում են հինգ դէմքեր, գլուխներին չալմայով գլխարկներ: Առաջին պարսպի յետեւից կայ երկրորդը աւելի բարձր եւ դարձեալ ատամնաձեւ, կրկնայարկ աշտարակով: Այս պարսպի վերայից երկու փողահարներ ուշադրութեան արժանի գլխարկներով, նման Հաղբատի աւետարանին, որոնց մասին յետոյ խօսք կը լինի.*



Պատկ. 3. Մուտքը Երուսաղէմ

*մէկը սրածայր, միւսը բոլորաձեւ* (սֆերիկ), *կանաչ եւ կարմիր կտորներով: Զաքէոսի ծառը այստեղ եւս ձիթենի է, ինչպէս Հաղբատի աւետարանի մէջ: Ժողովրդի երկու ներկայացուցիչներ ընդառաջ են եկել ձիթենու ճիւղերը ձեռքերնին: Պետրոս բռնել է մի ձեռքով իշու սանձը, միւսով ճանապարհը ցոյց տալիս, Յիսուսի կողքից եւ յետեւից գնում*